ISSN 1829-2925

Շողիկ

Shoghik
2023/2

AMAA
ARMENIAN MISSIONARY ASSOCIATION OF AMERICA
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մոմիկ, 1302 թ.

Հիմնադիր՝
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Խմբագրական խորհուրդ՝
Պատասխանատու խմբագիր՝ վեր. Ավետիք Խաչատրյան
Գեղ. խմբագիր՝ Լիլիթ Անտոնյան
Խմբագիր և սրբագրիչ՝ Լյուսյա Առաքելյան
Էջերի ձևավորումը՝ Արման Սարգսյանի

Editorial Board:
Chief Editor: Rev. Avetik Khachatryan
Content Manager: Lilit Antonyan
Copy Editor: Lyusya Arakelyan
Design and Illustration: Arman Sargsyan

Գրանցման վկայական՝
01Ս 000035
Հրատարակչության 22-րդ տարի

«Շողիկ» -ից մեջբերումներ անելու դեպքում հղումը պարտադիր է:

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն (AMAA)

ՀՀ, 0019, Երևան, Բաղրամյան 18
(+374 10) 54 35 52; 54 35 76
www.shoghik.am
ce@eca.am

© ՀԱԵ / ECA

Տպագրվել է «Մագաղաթ» տպարանում:
Տպաքանակը՝ 4.000:
Տարածվում է անվճար:

Ինչո՞ւ ես լալիս, ո՞ւմ ես փնտրում...

Մարիամն առավոտ կանուխ գնաց գերեզման՝ Տիրոջ անկենդան մարմինը յուղով օծելու: Հասնելով այնտեղ՝ տեսավ, որ քարը մի կողմ է գլորված: Նրա կարծիքով ինչ-որ մեկը վերցրել էր Տիրոջ մարմինը: Նա շփոթահար կրկին նայեց գերեզմանին և տեսավ երկու հրեշտակների, որոնք հարցրեցին՝ **«Կի՛ն, ինչո՞ւ ես լալիս»:** Ապա Հիսուսը կրկնեց միևնույն հարցը՝ ավելացնելով՝ **«Ո՞ւմ ես փնտրում»:** Այս հարցերը տեղեկություն ստանալու համար չէին: Նրանք ցանկանում էին, որ Մարիամը (իսկ այսօր՝ նաև մենք) մտածի, որ Փրկչին փնտրելը կարող է իր վիշտը հույսի փոխել: Մինչ այս դեպքերը, Տեր Հիսուսն առնվազն երեք անգամ խոսել էր Իր մահվան և երրորդ օրը հարություն առնելու մասին, բայց ո՛չ աշակերտները և ո՛չ էլ Մարիամն այդ պահին չէին հիշում դրա մասին: Մարիամը չէր տեսնում տեղի ունեցածի ամբողջական պատկերը, որն իր մեջ ներառում էր Հիսուսի հարությունը:

Հաճախ մենք էլ Մարիամի նման հիասթափության գիրկն ենք ընկնում, քանի որ Աստված այնպես չի գործում, ինչպես մենք ենք ցանկանում: Մեզ համար հաճախ անհասկանալի են Նրա գործերը, ուստի հայտնվում ենք շփոթության մեջ, երբ չենք հասկանում, որ Աստված ամեն բան վերահսկում է: Երբեմն կորուստի ցավը կարող է այնքան կուրացնել մեզ, որ մոռանանք նույնիսկ Աստծո ինքնիշխան լինելու մասին: Սակայն չպետք է կորցնենք վստահությունն առ Աստված: Հաճախ մենք չենք հասկանում՝ ինչու է Աստված թույլ տալիս նման տառապանքներ: Բայց չկա որևէ մխիթարություն առանց Հիսուսի հարությանը հավատալու: Հույսը, որ Հիսուսը հարություն է առել, մխիթարում է մեզ մեր արցունքների մեջ: Ինչ էլ որ կորցրած լինենք, պետք է կրենք մեր վիշտը հարության անհերքելի փաստի լույսի ներքո:

Մի՛ մոռացեք, գերեզմանը դատարկ է, որովհետև Տերը հարություն է առել: Ուրեմն, ինչո՞ւ ես լալիս:

Վեր. Գևորգ Գասպարյան

Մեղավոր կինը

Մի անգամ փարիսեցիներից մեկը խնդրեց Հիսուսին իրենց հետ ճաշել: Հիսուսը համաձայնեց, մտավ նրա տուն և նստեց ուտելու:

Այն քաղաքում մի կին կար, որ մեղավոր էր: Երբ իմացավ, որ Հիսուսը փարիսեցու տանը սեղան է նստել, մի ալաբաստրե շշով անուշահոտ յուղ բերեց, կանգնեց Հիսուսի ոտքերի մոտ և սկսեց լաց լինել: Կինն արցունքներով լվաց Նրա ոտքերը, իր գլխի մազերով սրբեց, այնուհետև ոտքերը համբուրելով՝ յուղով օծեց:

Փարիսեցին, որ կանչել էր Հիսուսին, տեսնելով դա, մտքում ասաց. «Այս մարդը եթե մարգարե լիներ, կիմանար, թե ով է այս կինը, որ դիպչում է Իրեն, որովհետև նա մեղավոր է»: Հիսուսը պատասխանեց նրան ու ասաց. «Սիմո՛ն, քեզ բան ունեմ ասելու»: Եվ նա ասաց. «Ասա՛, Վարդապետ»: Եվ ասաց. «Մի փոխ տվող երկու պարտապան ուներ. մեկը հինգ հարյուր դահեկան էր պարտք, իսկ մյուսը՝ հիսուն:

Երբ նրանք ոչինչ չունեին վճարելու, պարտատերը երկուսի պարտքերն էլ զիջեց: Հիմա ասա՝ նրանցից ո՞րն ավելի կսիրի նրան»: Սիմոնն էլ պատասխանեց ու ասաց. «Կարծում եմ՝ նա, ում շատ շնորհեց»: Հիսուսն ասաց նրան. «Ճի՛շտ դատեցիր»:

Ապա դառնալով դեպի կինը, Սիմոնին ասաց. «Տեսնու՞մ ես այս կնոջը: Ես քո տուն մտա, դու իմ ոտքերի համար ջուր չտվեցիր, բայց սա իր արցունքներով լվաց ոտքերս ու իր գլխի մազերով սրբեց: Դու ինձ նույնիսկ մեկ համբույր չտվեցիր, իսկ սա, այստեղ մտնելուն պես, անդադար համբուրում է ոտքերս:

Դու գլուխս յուղով չօծեցիր, բայց այս կինն անուշահոտ յուղով ոտքերս օծեց: Դրա համար, ասում եմ քեզ, այս կնոջ մեղքերը թեև շատ են, ներված են, որովհետև շատ սիրեց: Բայց ում քիչ է ներվում, նա քիչ է սիրում»: Իսկ կնոջն ասաց. «Քո մեղքերը ներված են»:

Նրա սեղանակիցները սկսեցին իրենց մտքում ասել. «Ո՞վ է Սա, որ մեղքեր էլ է ներում»: Եվ նա ասաց այս կնոջը. «Քո հավատքը քեզ փրկեց, գնա՛ խաղաղությամբ»:

Ղուկաս 7. 36 - 50

Աստված պատրաստ է ներելու մեր մեղքերը,
սակայն մենք պետք է զղջանք և խոստովանենք դրանք:
Մենք պետք է սիրենք Իրեն և հավատանք,
որ Նա կների մեր մեղքերը:

Աղոթք. Սիրելի՛ Աստված, շնորհակալ եմ այն ամենի համար, որ Հիսուսը տվել է ինձ: Օգնի՛ր իմանալ, թե ինչ կարող եմ անել այսօր, որպեսզի հաճելի լինի Նրան:

Ես եմ ճշմարիտ որթը:
Հովհաննես 15 1-5



Ես եմ կենաց հացը:
Հովհաննես 6 35-48

Ես եմ ճանապարհը,
ճշմարտությունը և կյանքը:
Հովանեես 14 6

Ես եմ աշխարհի լույսը:
Հովհաննես 8 12; 9 5

Հիսուսն ասաց՝

Ես եմ

Ես եմ հարությունը և կյանքը:
Հովհաննես 11 25

Ես եմ ոչխարների դուռը:
Հովհաննես 10 7

Ես եմ բարի հովիվը:
Հովհաննես 10 11-14

Իսկ դուք գիտե՞ք, թե...

Ո՞վ է փարիսեցին: Հրեաստանում Քրիստոսի ժամանակ գոյություն ունեցող կրոնական կուսակցության անդամ, թունդ ազգասեր և կրոնական ծեսերին խիստ հավատարիմ, բայց իրականում բարեպաշտ ձևացող, կեղծավոր մարդ: Քրիստոսը խստիվ հանդիմանում էր փարիսեցիներին՝ նրանց արտաքին և ձևական բարեպաշտության համար: Այն հավանաբար ձևավորվել է Ք.ա. 2-րդ դարում: *Փարիսեցի* հավանաբար նշանակում է «առանձնացված»:

Ինչո՞ւ էին տուն մտնելուց առաջ լվանում ոտքերը: Աղքատներից շատերը բոբիկ էին ման գալիս, իսկ հիմնական ոտնամանները սանդալներն էին: Ամենահասարակ ոտնամանը ոտքի չափով կտրված կաշվի կտորն էր՝ կաշվե երկար կապով, որն անցնում էր բթամատի և երկրորդ մատի արանքով և կապվում կոճի շուրջը: Թեև սանդալների մեջ ոտքերը չէին շոգում, բայց շատ էին փոշոտվում: Ուրիշի տուն մտնելիս ոտնամաններն անպայման հանում էին: Պարտադիր էր նաև հյուրերի ոտքերը լվանալը, քանի որ այն ժամանակ սեղաններ չկային կամ շատ ցածր էին, և մարդիկ դրա շուրջը նստում էին ծալապատիկ:

Ի՞նչ է դահեկանը: Դահեկանը կշռի և ոսկե դրամի միավոր է: Անվանումը ծագում է պարսից Դարեհ թագավորի անունից: Սկզբում կոչվել է դարեհական: Ավելի ուշ կրճատվելով դարձել է դահեկան կամ դեկան: Դահեկանի կշիռը ծագում է բաբելոնական սիկղից: Աքեմենյան Պարսկաստանում ոսկե դարիկի միջին մեծությունը եղել է 8,36 գ: Դահեկանի արժեքը պատմական տարբեր ժամանակահատվածներում որոշվել է ոսկու և արծաթի որոշակի հարաբերությամբ:

Ի՞նչ է ալաբաստրե շիշը: Այս շիշը պատրաստվում էր ալաբաստրե քարից, որը շատ է հանդիպում Իսրայելում: Այս քարն արտաքինից շատ նման է սպիտակ մարմարին: Սողոմոնի տաճարի ձևավորման մեջ օգտագործված ամենաթանկարժեք քարերից մեկն է: Քանի որ ալաբաստրե քարը շատ ամուր էր, դրանից պատրաստում էին օծանելիքի համար հատուկ սրվակներ: Յուղը կամ օծանելիքը պահվում էր այդ սրվակի մեջ, որի բերանը փակվում էր մոմով: Ալաբաստրից պատրաստված սրվակների մեջ օծանելիքն իր բույրը երկար էր պահում: Ալաբաստրե շշով օծանելիքը շատ թանկ էր և ոչ բոլորին էր հասանելի: Մեկ սրվակի արժեքը մոտ երեք հարյուր դահեկան էր:

Ի՞նչ է նշանակում «համբույր չտվեցիր»: Համբույրը ընկերության, ինչ-որ մեկին ընդունելու, հարգանքի և պատվի նշան է: Նոր Կտակարանում *համբույրը* տարբեր նշանակություններ ունի: Օրինակ՝ մեզ հայտնի Հուդայի համբույրը նշանակում է *մատնություն*, *դավաճանություն*, իսկ կնոջ կողմից Հիսուսի ոտքերը համբուրելը հայտնի է որպես «սուրբ համբույր»: Սիմոնը, ում տանը ճաշում էր Հիսուսը, Նրան համբույր չտվեց, այսինքն՝ նրան չընդունեց, հարգանքի չարժանացրեց, չպատվեց:

Մերձավոր Արևելքում մինչև օրս համբույրը սիրո, հարգանքի և պատվի նշան է:

Անմե՞ղ, թե՞ չանմեղ

Մեզնից շատերը մտածում են, որ իրենք ոչ մի վատ բան չեն արել: Երբեք չեն գողացել, մարդ չեն սպանել, ոչ մեկին իրավունքից չեն զրկել, հետևաբար նաև մեղք չեն գործել և կարիք չունեն Աստծուց ներում խնդրելու: Բայց արդյո՞ք որևէ վատ արարք չանելը բավարար է, որպեսզի ասենք, որ մեղք չունենք: Իհարկե ո՛չ: Մարդը կոչված է արարելու բարին, բարի գործեր անելու: Աստված մարդուն տարբեր շնորհներ է տվել, որպեսզի նա օգտագործի դրանք բարի գործերի համար: Հիսուսը հենց դա էր սովորեցնում իր աշակերտներին. **«... Սոված էի, և Ինձ ուտելիք տվիք, ծարավ էի, և Ինձ խմելիք տվիք, օտարական էի, և Ինձ ներս առաք, մերկ էի, և հագցրեցիք Ինձ, բանտում էի, և Ինձ մոտ եկաք»**: Այն ժամանակ արդարները կպատասխանեն և կասեն Նրան. **«Տե՛ր, մենք Քեզ ե՞րբ տեսանք սոված և կերակրեցինք, կամ ծարավ և ջուր տվեցինք: Ե՞րբ տեսանք քեզ օտարական և ներս առանք, կամ մերկ և հագցրինք. Կամ ե՞րբ տեսանք քեզ հիվանդ կամ բանտի մեջ և այցելեցինք»:**

Եվ Թագավորը կպատասխանի ու կասի նրանց.
«Ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ Իմ այս եղբայրներից ամենափոքրին արեցիք, Ինձ արեցիք» (Մատթ. 25. 35-40):

Քրիստոնյայի առաքելությունը ոչ թե միայն չարը չգործելն է, այլև բարի գործերով հավատը կենդանի պահելը:

Պողոս առաքյալը ևս Եփեսացիներին ուղղված իր
նամակում մեզ սովորեցնում է,
որ վատ արարք չանելը
դեռևս բավական չէ,
պետք է նաև բարին գործել:

Եվ այսպես նա ասում է.

Սպությունը դե՛ն գցեք:

Ամեն մարդ ճշմարտությունը թող ասի իր դրացուն:

Ով գողանում էր, թող այլևս չգողանա:

Աշխատի և բարին գործի, որպեսզի կարողանա կարիք ունեցողին էլ տալ:

Ձեր բերանից ապականող խոսակցություն թող դուրս չգա:

Սա այն, ինչ շինության համար բարի ու պիտանի է, որպեսզի լսողներին շնորհով լցնի:

Ձեր միջից վերացրեք ամեն դառնություն, բարկություն, զայրույթ, աղաղակ և հայհոյություն՝ իրենց չար հեգևանքներով հանդերձ:

Իրար հանդեպ քա՛ղցր եղեք, գթացեք, ներեք միմյանց, ինչպես որ Ասպված Քրիստոսով ձեզ ներեց:

Եփեսացիների 4.28-32

Իսկ Հակոբոս առաքյալն այս ամենին ավելացնում է.

«Ուստի ով գիտի բարիք գործել, բայց չի գործում, մեղք է նրա համար»:

Հակոբոս 4.17

Ի՞նչ վատ արարքներ՝ մեղքեր կան, որոնք կարող ես փոխարինել Աստծուն հաճելի գործերով: Լրացրո՛ւ աղյուսակը.

Ի՞նչ չանել	Ի՞նչ անել փոխարենը

ՏԱՃԱՐԻ ԲԱԿՈՒՄ

Զոհ մատուցելու համար այցելուները պետք է իրենց գումարները փոխանակեին ըստ տաճարային արժույթի: Գտի՛ր փոխանակողին:

Ողջ կենդանիներին վաճառում էին՝ որպես զոհաբերվող կենդանիներ: Գտի՛ր 8 գառնուկներին:



Գտի՛ր աղավնիների վանդակը:

Հռոմեացիներին արգելված էր մտնել տաճար. նրանք պահպանում էին այն: Գտի՛ր 6 հռոմեացի զինվորներին:

Գտի՛ր քահանայապետին՝ թանկարժեք քարերով զարդարված լանջապանակով:

Դու տեսնո՞ւմ ես քահանային, որը ղեկավարում է երաժիշտներին:

Գտի՛ր գրպանահատին, որը փող է գողանում հոգնած ուխտավորից:

Օրենքի ուսուցիչները, ովքեր ռաբբիներ էին կոչվում, գլուխները ծածկում էին թալիթներով: Գտի՛ր ռաբբիին, ում ձեռքին թղթագլանն է:

Հիսուսի աշակերտ Հուդա Իսկարիովտացին Նրան մատնել է թշնամիների ձեռքը: Գտի՛ր Հուդային, որը զրուցում է քահանայապետի հետ:

Շունը տաճարի բակ է մտել: Ո՞վ է փորձում նրան բռնել:

Տեսնո՞ւմ ես աղքատ կնոջը, որը ցանկանում է գումար նվիրաբերել և հաշվում է մանրադրամները:

Հիսուսի ժամանակներում տաճարը նորացված էր, բայց շինարարական աշխատանքները դեռ շարունակվում էին: Գտի՛ր կռունկը:



Գտի՛ր Անտոնիոսի հռոմեական ամրոցը, որտեղից կարելի էր հետևել տաճարի բակի անցուդարձին:

Հիսուսը զայրացած էր այն բանից, որ տաճարի բակում ծաղկում էր առևտուրը: Նա շուռ տվեց սեղանները և առևտրականներին հրամայեց լքել տաճարը: Դու տեսնու՞մ ես Հիսուսին:

Նկարեց Փիթեր ՔԵՆԹԸ

Գտի՛ր սաղմոս նվագող երաժիշտներին:

Որտե՞ղ է հռոմեացի կառավարիչ Պոնտացի Պիղատոսը:

Տեսնո՞ւմ ես տաճարի տանիքը: Երուսաղեմ գնացող ճամփորդներն այն տեսնում էին արդեն հեռվից:

ՁԱՏԿԻ ԱՌԻԹՈՎ

Իմ երեխաներից մինը հերթական տարվա Զատկից առաջ մի գառ ուներ: Ամբողջ օրը գրեթե զբաղված էր դրանով: Տանում էր, արածեցնում, խոտ էր քաղում դրա համար, ստիպում էր, որ ուտի, ստիպում էր, որ ջուր խմի: Մի խոսքով՝ միանգամայն մտերմացել էր հետը: Եվ անհամբեր սպասում էր Զատիկի գալուն. անընդհատ հարցնում էր, թե քանի անգամ էլ պիտի քնենք, որ այն գա, իր գառանն էլ ասում էր, որ այն նույնպես ուրախանա, թե Զատիկը գալու է:

Զատիկը եկավ, և հենց Զատիկի առավոտը գառան մայունը կտրվեց մեր տանից: Մորթեցին: Ու երեխան շատ զարմացավ, որ Զատիկն էս էր, ու Քրիստոսն էլ էսպես…

Զատիկի ու Քրիստոսի ամեն տեսակ բացատրությունը նրան չգոհացրին, և նա մնաց մի ծանր տպավորության տակ: Ես ստիպված էի Զատկի նշանակությունն ու դերը ցույց տալու համար ձեռքս մեկնել դեպի նոր բացվող ծաղիկներն ու զարթնող բնությունը, իսկ գառանը մորթելու մեղքը գցել Քրիստոսի վրայից, ու համոզել, որ Նա դրա հետ ոչ մի կապ չունի:

Եվ ճշմարիտ որ, Զատկի տոնին, երբ մարդ կանգնում է ու նայում Զատիկը տոնող, «Քրիստոս հարյավ» աղաղակող բազմությանը, զարմանում է: Ի՞նչ կա այդ օրը, և ինչո՞ւ են մարդիկ ուրախանում, և կամ ո՞վ է ուրախանում նրանցից:

Այդ օրը գրեթե ամեն տուն, ով կարող է, պարտավոր է մի գառան մայուն կտրել, ճոխ սեղան պատրաստել, շատ ուտել ու խմել և լավ հագնվել: Մի խոսքով՝ արյան, որկրամոլության ու շռայլության օր: Եվ ոչ մի այլ օր աղքատի ու հարուստի տարբերությունը այնպես չի շեշտվում, ինչպես այդ օրը:

Ի՞նչ կա էս ամենի մեջ գեղեցիկ ու գաղափարական: Եվ ահա իմ երեխայի այն վշտի նման մի վիշտ, որ պատմեցի, պաշարում է մարդու: Էս ամենի մեջ ո՞ւր է Քրիստոսն Ինքը, ո՞ւր են Նրա անսահման սերն ու բարությունը, Նրա աստվածային մեղմությունն ու խաղաղությունը, Նրա հեզությունն ու անընչասիրությունը…

Եվ դարձյալ նույն պատասխանը՝ *Նա ոչ մի կապ չունի էս ամենի հետ*: Նա դեռ հարություն չի առել մարդկանց սրտերում. և միայն մի բան, որ հաստատ է, այն է, որ հարություն է առել Զատկին ու հարություն է առնում ամեն Զատկի և միշտ դարձնում է Զատիկն էնքան տենչալի ու գեղեցիկ, դարձյալ բնությունն է: Զատիկն է, որ ինչպես մեր Նաղաշ Հովնաթանն է ասում.

Վերանայ ձըմեռն, և գայ ամառը,
Կանաչի խոտը, և ծաղկի ծառը
Տերևախառը…

Կամ ինչպես հներն են երգում.
Նարտն կուգայր ծաղիկներով,
Ցերկնից հաւերը կարդալով…
Յորժամ հայոց Զատիկն գայր:

Իսկ Քրիստոսը ո՞վ գիտի, թե քանի մարդկանց սրտում է հարություն առել: Անշուշտ, շատ քիչ մարդկանց սրտում: Եվ ո՞վ գիտի, թե որտեղ են նրանք, ի՞նչ անկյունում, ի՞նչ զգեստի տակ… ով էլ որ լինեն, ուր էլ որ լինեն, էնտեղ օրհնյալ է հարությունը Քրիստոսի:

Հովհ. Թումանյան, 1913



ՆՎԱՐԴ ՉԱՐՅԱՆ

Սրանից մոտ 100 տարի առաջ հազվադեպ կարելի էր հանդիպել կին քանդակագործների: Սա ամենևին զարմանալի չէ, որովհետև գրեթե մինչև 20-րդ դարի վերջը կանանց չէր թույլատրվում ակադեմիական կրթություն ստանալ, իսկ նրանց, ում հաջողվում էր, շուտ մոռացվում էին: Եթե գեղանկարչության մեջ մենք թերևս կարող ենք տալ կին նկարիչների անուններ, ապա քանդակագործության մեջ շատ կդժվարանանք: Սակայն հայ քանդակագործ Նվարդ Չարյանը դարձավ բացառություն:

Նվարդ Չարյանը ծնվել է 1917 թվականին, Ֆլորենսում, Կոստան Չարյանի և Թագուհի Շահնազարյանի ընտանիքում: Չնայած գրականագետ հորը և երաժշտության մասնագետ մորը՝ Նվարդն ընտրում է քանդակագործի դժվարին ուղին:

Նա հազիվ 19 տարեկան էր, երբ շահեց Նեապոլում անցկացվող դիմանկարի մրցույթի սահմանած առաջին մրցանակը: Իսկ ահա Իրանի կառավարությունը հենց նրան է դիմում վերջին շահի՝ Ռըզա Փահլավիի դիմանկարի համար:



Ցավոք Երկրորդ համաշխարհային պատերազմն ընդհատում է նրա ստեղծագործական բեղուն շրջանը: Այդ տարիներին Ն. Զարյանն ակտիվորեն մասնակցում է իտալական դիմադրության շարժմանը և պարտիզանական խմբեր կազմում՝ մարտնչելու ֆաշիստական զորքերի դեմ:

1950 թվականն էր: Հռոմում Իտալիայի կառավարությունը հայտարարում է մրցույթ՝ նորակառույց կայարանի գեղարվեստական ձևավորման համար: Մասնակիցների մեջ էին արդեն անուն ունեցող քանդակագործներ: Սակայն Նվարդ Զարյանն արդարացիորեն արժանանում է առաջին մրցանակին:

Շուտով Հռոմի «Galleria dello zodiacko» ցուցասրահում Նվարդը 18 քանդակ և գծանկարներ է ցուցադրում: Սկսվում են նաև անհատական ցուցահանդեսները՝ Կոպենհագեն, Օսլո, Վիեննա… Նա դառնում է Եվրոպական բիենալեների (մշակութային ձեռքբերումները ցուցադրող ցուցահանդես կամ փառատոն) մասնակից, շրջագայում է տարբեր քաղաքներում:

Նվարդի աշխատանքներում կնոջ, մոր կերպարը գերակշռող է: Նա հիանում էր մայրության, շարունակության գաղափարներով: Հավատարիմ էր անցյալին, ընտանիքի պատմությանը, իր արմատներին: Հայրենիքի մասին այսպես է ասել. «Հայրենիքի իրականությունը շատ շքեղ է, քան ես պատկերացնում էի: Տարբեր երկրների քարերի վրա եմ աշխատել, բայց հայրենիքի քարը արվեստագետից այլ հմտություններ է պահանջում»: Երկու անգամ ցուցադրություններ է ունեցել Երևանում:

Նվարդ Զարյանի վերջին ցուցահանդեսը բացվել է 1996 թվականին, Հռոմից ոչ հեռու գտնվող Սանտա Մարիներլլա ծովափնյա փոքրիկ քաղաքում, որտեղ գտնվում էր նրա գեղեցիկ առանձնատունը: Նվարդը, լինելով ժամանակակից արվեստագետ, անդավաճան էր ռեալիստական արվեստի ավանդույթներին:

Նրա գործերում իշխող կնոջ կերպարը, հույսի ու սպասման գաղափարներն այնքան կենսունակ և ոգևորող են, որ ժամանակը դրանք ավելի տեսանելի և հնչեղ է դարձնում:

Այսօր Նվարդ Զարյանի թվով 25 աշխատանք ցուցադրվում է Հայաստանի ազգային պատկերասրահում:

Սիրո լավագույն օրինակը

«Բարիշե՜նք, բարիշե՜նք
Հազա՛ր տարի չկռվենք»:

Սա մի խաղ է, որը խաղացել են գրեթե բոլորը, երբ որևէ մեկից նեղացած են եղել: Ես բացառություն չեմ: Միայն իմ պարագայում, որպես կանոն, ինձնից են միշտ ներողություն խնդրել:

Փոքր տարիքում շատ հիշաչար էի: Չզիջելն ու անհանդուրժողականությունն ինձ տիպիկ նկարագրելու հատկանիշներ էին: Երբ ինձ նեղացնում էին, հաշտվելու համար ամիսներ և երկար բարոյախրատական զրույցներ էին պահանջվում: Ես պարփակվում էի, դառնում լռակյաց և սառը, մինչև այն պահը, երբ իմ մեջ ուժ էի գտնում ներելու և խաղալու սովորություն դարձած խաղը: Օրերից մի օր մեր բակ նոր տեղափոխված մի աղջնակ ինձ հրավիրեց կիրակնօրյա դպրոց: Ես չէի էլ պատկերացնում, թե ինչ է կիրակնօրյա դպրոցը, բայց քանի որ այն ինձ հետաքրքրեց, սիրով ընդունեցի հրավերը:
- Չուշանա՛ս, առավոտյան ժամը 10:00-ին քեզ կսպասեմ, - ասաց ընկերուհիս և վազեց տուն:
Օրը բացվեց թռչունների անուշ դայլայլով: Ես գիշերը լուսացրել էի անհանգիստ սպասումով: Առավոտյան հագնվեցի և ճանապարհ ընկա. չէ՞ որ բակում ինձ սպասող կար: Բռնեցի ընկերուհուս ձեռքը և արագ քայլերով գնացինք:

- Մեր թաղամասում նորաբաց մի եկեղեցի կա, - ասաց ընկերուհիս, - ահա այդտեղ է կիրակնօրյա դպրոցը: Արի՛, արդեն հասնում ենք:
Ներսում շատ մանուկներ կային: Մի սիրունատես աղջիկ հետաքրքիր նկարներով պատմում էր Աստծո սիրո մասին, որից հետո, հիշում եմ, ասաց.

- Եկեք սովորենք այսօրվա մեր ոսկեղեն համարը. *«Քեզ սիրում եմ հավիտենական սիրով»: Երեմիա 31.3*

Սա Հիսուս Քրիստոսի պատվերն է բոլորիս: Սրանով է Նա հայտնում Իր մեծ և անսահման սերը, որը երբեք չի պակասում, հոգատարություն է տարածում ամենուր և անձնազոհության լավագույն օրինակն է բոլորիս համար:

Այդ խոսքերում այնքան ջերմություն ու զորություն կար, որ իմ ներսում ինչ-որ բան փոխվեց: Լսելով Աստծո սիրո մասին՝ որոշում կայացրեցի ես էլ լինել ներողամիտ և լավ ընկեր: Սկսեցի պարտաճանաչ հաճախել կիրակնօրյա դպրոց, որպեսզի ավելին իմանամ Աստծո մասին և կարողանամ նմանվել Նրան: Այդ օրը հասկացա, որ Երկնային Հոր թանկագին զավակն եմ, և Նա ինձ սիրում է յուրահատուկ սիրով:

Անցան 20 երկար ու ձիգ տարիներ: Չնայած տարբեր դժվարություններին և փորձություններին՝ ես անդավաճան մնացի իմ որոշմանը, սկսեցի սիրով ու ջերմությամբ ծառայել եկեղեցում:

Սիրելի՛ ընթերցող, չներելով՝ դու վնասում ես թե՛ քեզ, թե՛ քո շրջապատին: Իսկ ներման բերկրանքը ծնում է ուրախության, խաղաղության և հույսի ծիլեր՝ որպես նոր և յուրահատուկ կյանք ունենալու գրավական:

Սիրե՛նք, ներե՛նք, ապրե՛նք երջանիկ՝ Աստծո սիրո խոստումը մեզ և մեր շրջապատող մարդկանց համար օրինակ ունենալով.

- Քեզ սիրում եմ հավիտենական սիրով…

Մելինե Մարտիրոսյան, ք. Վանաձոր

Մայրիկիս



2. Սիրելի՛ մայրիկ,
Ես քեզ շատ եմ սիրում,
Բայց միայն կարող եմ
Աղոթել քեզ համար:

Կրկներգ.
Սիրելի՛ Հիսուս, (2)
Մայրկիս համար, (2)
Խնդրում եմ, խնդրում (2)
Քո արքայությունն:

Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս,
Ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ,
Ու երկինքը հոգուս մեջ, ու արևը աչքերիս,
Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք,—
Ու քայլեցի խայտալով ու շաղ տալով մայթերին
Մանուշակներ ու վարդեր ու շուշաններ ձյունաթույր,
Ու մարդիկ ինձ տեսնելով՝ իրենց հոգնած աչքերին
Տեսան ուրիշ մի աշխարհ, գարուն տեսան նորաբույր,
— Ինչ թարմություն,— ասացին,— ինչ թարմություն,— ու բացին
Լուսամուտներն իմ առջև, ու ես իմ սիրտը բացել՝
Անցնում էի երգելով ու շաղ տալով մայթերին
Մանուշակներ ու վարդեր ու հասմիկներ հոգեթով,
Կարծես մի ողջ բնություն մի պատանի էր դարձել,
Քաղաք իջել լեռներից՝ կանցներ զմրուխտ հեքիաթով
Երկրե-երկիր շաղ տալով կակաչներն իր ձեռքերի,
Մեր երգերի լուսաբացն ու գարունը լեռների:

Հովհաննես Շիրազ